ԱՊԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ, ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՀՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Վ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Ապարանի շրջանը՝ պատմական Նիգ գավառի կենտրոնական մասը, հարուստ է պատմաճարտարապետական հուշարձաններով։ Պատմական հուշարձանների շարքը լրացնում են ձեռագիր և հնատիպ գրքերը, դրվագված և արձանագրված մետաղե առարկաները, կենցաղային առարկաները։ Դրանց մեծ մասը 1830-ական թթ. ապարանցիների նախնիները իրենց հետ բերել են Ալաշկերտից, Սասունից, Էրզրումից, Խոյից և այլ վայրերից, իսկ մի փոքր մասը ստեղծվել է տեղում։

Տպագրության ներկայացվող շարքն ընդգրկում է ինչպես ձեռագիր ու հնատիպ գրքերի, այնպես էլ մետաղե առարկաների վրա եղած հիշատակարաններ, հիշատակագրություններ ու արձանագրություններ։ Ձեռագրերը, հնատիպ գրքերը, արձանագրությունները, որոնք հրատարակվում են առաջին անգամ, ներկայացնում ենք ժամանակագրական կարգով։

ՁԵՌԱԳՐԵՐ

1

ԱՎԵՏԱՐԱՆ

(Ապարան, Ս. Մայիլյան)

ԺԳ—XIII

Թերթ՝ *340*։ Նյութ՝ *մագաղաթ*։ Մեծություն՝ *22×17,5*։ Գրություն՝ *երկսյուն*։ Գիր՝ *բոլորգիր*։ Տող՝ *19*։ Մանրանկարչություն—*Մատթեոս՝ 1բ. Մարկոս՝ 98բ, Ղուկաս՝ 160բ, Հովհաննես՝ 264բ։ Կիսախորան՝ 2ա, 99ա, 161ա, 265ա։ Լուսանցազարդ՝ բուսական։ Զարդագիր՝ հանգուցագիր։ Պահպանակ՝ մեկական երկաթագիր թերթ։ Կազմ՝ կաշեպատ տախտակ (Ա փեղկի վրա փակցված են մանր խաչեր)։ Վիճակ՝ լավ, 23-րդ էջից հետո երկու թերթ կտրած-հանած է։*

Ս. Մայիլյանը ձեռագիրը ձեռք է բերել 1930-ական թթ.։

Հիշատակարան

Նվիրողի

340բ. Փառք... ես ՏՐ Աստուածատուրս բերաք զՍԲ Աւետարանս և դրաք ի դուռն ՍԲ եկեղեցոյս, որ կոչի ՍԲ Գէորգ, յիշատակ մեզ և մեր ննջեցելոցն և ոչ ոք իշխէ հեռացուցանել զՍԲ Աւետարանս ի դրանէ ՍԲ եկեղեցոյս՝ ոչ յազգականաց իմոց և ոչ յաւտարաց, և քանի այս վանքս շէն կենայ սայ յայս եկեղեցոյ դուռս կենայ։ Եւ ով որ յետ ժամանակաց դաւի առնէ և կամ ասէ թէ

մեր ազգականացն է կամ կամակից լինի, որ զայս Աւետարանս ի յայս եկեղեցոյ դոնէս հանէ, նայ ինքն անիծած կենայ ի հոգի և ի մարմին. ամէն, և մասն և բաժին զՅուդային և զայլ խաչահանուացն առցէ։ Եւ զԱՏ ինքն և իւր ննջեցեալսն ոչ տեսանէ. ամէն եղիցի։

Կազմին ամրացված խաչերի վրա փորագրված են «Վարդխաթուն», «Անդրիաս», «Յոհան» անունները։

2

ԱՎԵՏԱՐԱՆ

(Մելիքգյուղ, Մ. Կարապետյան)

Մամասի վանք (Վայոց ձոր) ԺԴ—XIV

Գրիչ՝ *Մկրտիչ։* Ստացող՝ *Ասլանպէկ։* Թերթ՝ *331։* Նյութ՝ *թուղթ։* Մեծություն՝ *29,5×23,8։* Գրություն՝ *երկսյուն։* Գիր՝ *բոլորգիր։* Տող՝ *17։* Մանրանկարչություն—*Մատթեոս՝ 2ա, Մարկոս՝ 93ա, Ղուկաս՝ 158ա, Հովհաննես՝ 254ա։ Կիսախորան՝ 4։ Լուսանցազարդ՝ տերունական, բուսական։ Զարդագիր՝ հանգուցագիր։* Կազմ՝ *կաշեպատ տախտակ։* Վիճակ՝ *անբավարար, էջերը խոնավությունից վնասված, գրչի հիշատակարանի էջերի վերին երկուական տողերը կտրված։*

Ավանդության համաձայն Ավետարանը բերվել է Վանից։

Հիշատակարան

Գրչի

330ա—331բ. Փառք... Արդ գրեցաւ աստուածային աւետաբեր կտակս ի դաւառիս Վայոցձորոյ, *ի վանս ՍԲ* Մամասա, *ընդ հովանեաւ սուրբ վկայիս, ձեռամբ յոգնամեղ և անպիտան գրչի* Մկրտչի։ *Արդ աղաչեմ զամենեսեան որք կարդայք կամ աւրինակէք յիշեցեք յաղաւթս ձեր զբազմամեղ գծողս և զծնողսն իմ և զամենայն արենակիցս և զհամաւրէն ազգակիցս իմ. զի ԱՏ զձեզ յիշէ յիւր միւս անգամ գալուստն. ամէն, ամէն։*

(Ձեռագիրը փոխված է) Ի դերակա հրաբունական սեռից յարքա... (2 տող կտրված է) վտակաւք արփմամբ պարարեալք և եռահիւսական բնութեանցն յանգի. սիրական առ միմեանս կապակցելով։ Ի մարտս դիմիար ի սպառազէն. յընդրելոց ընդրեալք սուրբ քահանայք որք հետևեցան երանական աւետաբեր աստուածաբառ կտակիս և աշխատութինիս բազմադիմակիս յինքեանս բերեալ այսր և անդր տարաբերեցան ի (2 տող կտրված է) ...անեւացս ի յաւգագայս զԱՏ ողորմընկալեալ պարգևս առ ի յիշատակ հոգոց և ննջեցելոց ինքեանց. ստացան գանձս պատուականս մրշտընջենաւորս, համոզելիս, պտղաբերս, հոգևորականս։

Ով աստուածառաք հոգով իմաստիւ լցեալք ուրախական աւրհնութեանց ընթերցողք յիշեցեք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զհոգևորս սուրբ քահանայքն զՆերսէս *մականուն կոչեցեալ* Ռատ *և* զՍէք *մականուն* Սոս *և զծնողս նոցա և զամենայն արեան մերձակաս և զվարդապետս սոցայ* զՅովանէս *և* զԳրի-

գոր: Ընդ նոսին և զՏիրածէր քահանայ և զամուսին իւր զՏիկին: Ընդ նոսին և զգերապատիւ առաջնորդս մեր զ... (1 բառ ջնջված) Հոգէս, Աւետիք և զ... (1 բառ ջնջված) նեալ զամուսին զԱշախս և զսիրեցեալ երջանիկ մանուկս նոցա զԱպղրլ... (1—2 բառ ջնջված) սա հասակաւ դիմաւք և աստուածային ուսմամբ մարգարտիւ դպրական սազմոսիւ և աւրհնութեամբ փոխեցաւ ի ՔՍ ընդ նոսին և զհոգևոր հայրն մեր զՅակոբ և զամուսին իւր զԴոհուր և զպատանին իւր Զաքարիայ նաև զաստուածապահ գեաւղիս տանուտերս զմեծ և զփոքր, զայրս և զկանայս, զծերս և զտղայս առհասարակ զամէնեսին որք բաղում աշխատութեամբ աշխատեցան (2 տող կտրված է) իւր և որպես... (1—2 բառ ջնջված) զձագ ընդ թևաւք իւրովք ընդ Հովանեաւ սրբոյն Ստեփանոսի Նախավկային: Պահեսցէ զնոսա ԱԾ անխռով ի խաղաղութեամբ և ցաւղ երկնային իջցէ յոսկերս ննջեցելոց սոցին և բուսուցանէ զնոսա պտուղ արքայութեան երկնից:

Արդ աղաչեմ զամէնեսեան որք առնեք յիղմ (?) անարժանի զի ԱԾ (շարանընթեռնելի է):

Ստացոգի

156ա, բ—157ա. Յանուն ԱՅ ես՝ Ասլանպէկ միայբանեցայ սրբոյ Ավետարանիս, Ա դուկատ տվի ԱԾ ողորմի Ասլանպէկայ. Ամէն:

Յանուն ԱՅ ամենակալին ես՝ Ասլանբէկ միաբանեցայ աստուածային Աւետարանիս և գնեցի զՀուկաս գլուխ ի Հալալ ընչից իմոց և յարդար վաստակոց:

Արդ ով որ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զհաւատարիմ Ասլանբէկն և զսրբասէր կենակիցն իւր զՄանիշակ, և զաւրինութեանց պտուղս իւրեանց զաւակսն զՊարսամիկն, և զՅոհանէսն, և զՅովանէս, և զԱթանէսն, և զնորընձայ մանուկն Պարսոմին, որ տղայական հասակաւ փոխեցաւ ի ՔՍ:

Արդ ընկալա զաստուածաշունչ կտակս և ետու ի ձեռս սրբասէր քահանայիցն Ներսիսի և Սէթի, որ յամէն տարի Ա (1) աւր ժամ տան զատկի կիրակէին ժամ և եթե յետ սոցա յով ոք որ անկանի կատարիչքն աւրհնին յԱՅ և խափանիչքն զնորին հակառակքն: Աղաչեցէք զԱԾ զի պահեսցէ Ավետարանս զաւրհնութեամբ զաւակն Յոհանիսի զաւաքն ընդերկայն աւուրս:

Փառք... Արդ ով որ կարդայք կամ աւրինակէք յիշեցէք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զՏՐ Յովանէս և զիւր որդիքն. ամէն: զՅոսէփ քահանայն և զիւր որդիքն՝ զՍրապիոն և զԳրիգորն. ամէն: Եւ առաւելս զԳրիգորն և զիւր կողակիցն. ամէն: Ով որ հակառակի Աւետարանիս և ի ՏՐ Յուսէփի տանեն հանէ զանէծքն զԿայենին և զՅուդային և զայլ խաչահանողացն առցէ. ամէն:

Հետագայի

92բ. (Սկիզբը անընթեռնելի է) և զՇահինար ամուսին նորայ յիշեայ ՔՍ ԱԾ զՇահրմանն և զԱռաքելն, զորդիքն Դէորգայ, որ են ըստոյգ ազգա-

կիցք իմ. յորժամն գաս ի նորոգել զերկիր և ողորմեայ. ՔՍ ԱՄ ողորմեայ Խալափին և զԱչին: Յիշեայ ՔՍ ԱՄ զՀովայդեղ և զԱւագ. ՏՐ զՇոյսիկն և զմայր Ուեն, զՄանտիկին և ողորմեայ նոցանց։

3

ԱՎԵՏԱՐԱՆ

(Արագած, Զ. Դանիելյան)

Խարտիշիս գյուղ ՉԼԵ—1486

Գրիչ՝ Աստուածատուր քահանա, Յովանէս սարկավագ։ Ստացողներ՝ Ըռատ, Մանուել եպիսկոպոս։ Նորոգող՝ Սարգիս։ Թերթ՝ 247։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝ 14×21։ Գրություն՝ երկսյուն։ Դիր՝ բոլորգիր։ Տող՝ 21։ Մանրանկարչություն—Մատթեոս՝ 2բ, Մարկոս՝ 69բ, Ղուկաս՝ 114բ, Հովհաննես՝ 187բ։ Կիսախորան՝ 3ա, 70ա, 115ա, 188ա։ Լուսանցազարդ՝ բուսական։ Զարդագիր՝ հանգուցագիր։ Կազմ՝ կաշեպատ տախտակ։ Պանպանակ՝ մագաղաթյա զույգ թերթ, երկաթագրով։ Վիճակ՝ բավարար։

Ավետարանը կոչվում է «Կարմրակող»։

Հիշատակարան

Գրչի

243բ. Փառք... Գրեցաւ Աւետարանս այս ի թվականութինիս հայոց ՉԼԵ (1486), ձեռամբ յաւդնամեղ և մեղսաթավալ և սուտանուն գրչիս Աստուածատուր քահանայի, ի դեղս Խարտիշիս և ի դուռս բազմահաւաք սրբոցս ի ՍԲ Աստուածածնիս և ի Առաքելոցս, և ի ՍԲ Սարգսիս և ի ՍԲ Թէոդորոսէ։ Արդ աղաչեմ զամենեսեան որք կարդայք կամ աւրինակէք մեղաց թողութիւն խնդրեցէք մեզ յիշողացս և ձեզ յիշեցողացդ ՔԻ փառք յաւիտեանս, ամէն։

Երկրորդ գրչի

247բ. Եւ ընդ սոցին զիս վանարժան հող և զմոխիր կիսայսարկաւագ Յովանէս գրրիչս յիշեցէք ի ՔՍ. զի խիստ սակաւ եմ աշխատեր։

Ստացողի

243բ—244բ. Փառք... Ես՝ Ըռատս Բլրակցիս ըստացայ սայ ի հալալ ընչից և ի դառն քրտեաց յիշատակ ինձ և ծնաւղաց մերոց զՍԲ Աւետարանս և իմ հաւրն Մէլքիսէթին, և իմ մաւրն Հազրէվարդին, և եղբարցս իմ Գրիգորին և Պատրանին, պզտի Պարոնին և Լուսպարոնին, և զիս՝ զԸռատս. և զկողակիցս Շնորհֆորն, և զաւակն իմ զՀանգուցեալ ի ՔՍ զԽաչերեսն և զդստերս իմ զԳուլիստանն և Հազրէվարդն, և զամենայն արեան մերձաւորս առ դրանս ՍԲ Սոփայ* և այլ ով ոք որ երեխտաւոր լինի ՍԲ Աւետարանիս յիշեալ լիցի ի ՏՐ

* Ջնջված և վերստին գրված է։

ԱՄ։ Եւ մի ոք յիշխեսցէ հանել զսայ ի յիշատակէ ոչ տիրելու և ոչ ծախելով, ոչ գրաւ դնելով, և ոչ այլևայլիւքի պատճառանաւք. զինչ և իցէ, և ոչ յիշխեսցէ առնուլ զսա ոչ ի յազգականաց, և ոչ յընտանեաց և ոչ ի յաւտարաց, ոչ ի զաւակաց, և ոչ ի յեղբարց, ոչ ի սիրելեաց և ոչ ի բարեկամաց։ Այլև մի ոք իշխեսցէ ջնջել զգիր յիշատակիս և կամ կտրեսցէ զթուղթս յիշատակ գրիս զի մի պատիժս պատուհասից կրեսցեն ի յԱՅ, զՅուդայի և զԿայենի և ամաւթալից լինի յահեղ և մեծ ատեանն դատաստանին ՅԻ ՔԻ ԱՅ ամենացուն։ Այլ խնամարկողքն զվարձս բարիս ընկալցին ի յԱՅ և ի ՏԷ ՅԷ ՔԷ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն։ Զեզ յիշողացդ և մեզ յիշեցերոցս ողորմեսցի ՏՐ ԱՄ յաւիտեանս յաւիտենից. ամէն, եղիցի, եղիցի։

(Այլ ձեռագրով) Ուստի տեսեալ զսորայ անձառ փրկայգործութեան խորհուրդն բարէմիտ և հաւատարիմ տանուտէրն Ռատն, յիշելով զասացեալ թէ Գանձեցէք ձեզ գանձ յերկինս և թէ Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն։

Ով պատւական մարդ գովելի
Քեզ շինեցիր գանձ գովելի,
Սայ քեզ ճրագ ի վառ լինի,
Զհոգիտ յերկինս ուղաւորի,
Զինչ որ ունիս զսայ չի արժի։

Դարձեալ յիշեալ ի ՏՐ վերոյասացեալն զպարոն Ռատն և զհոգայդեղն և ԱՄ ողորմի ասել և տէրն, որ առատն է ի տուրս բարեաց. մեզ և ձեզ ամէն։ Սակաւ գիրս կարդայ եւ զիս յիշայ, ողորմեսցի։

Նորոգողի

244բ—247ա. Աւետարանս յիշատակ է Սանուել եպիսկոպոսին և իւր ծնաւղացն. հաւրըն՝ Միրզաջանին, մաւրն՝ Նազահ փաշային, եղբարցն Զոհրապին, Ճանիպեկին, ՏՐ Կարապետին և ամենայն արեան մերձաւորացն, կենդանեաց և ննջեցելոց։ Զեռաւք իւրով ի բարեսէր առն Դաաարն և նա ետ կազմել զՍԲ Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց վասն յուսո արքաութեան։ Ոչ թէ ծախելով և կամ գրաւելով, այլ միայն նորոգելով և դարձեալ ետ զՍԲ Աւետարանս ի դուռն ՍԲ Աստուածածնին և Լրջակա ՍԲ Նշանին ի ձեռն Մանուել եպիսկոպոսին, և եղբայր որդոյն ՏՐ Կարապետ սրբայսնունդ կրաւնաւորին։ Մի ոք իշխեսցէ գրաւել և տաւի անել և կամ հանել ի դրանէ Տեղերա, զի մի պատիժս կրեսցէ յԱՅ, այլ մնա անջինջ յիշատակ Մանուել եպիսկոպոսին և ծնաւղացն ի դուռն ՍԲ ուխտին Տեղերա և յիշէ յորժամ ընթեռնու զՍԲ Աւետարանս։

Ընդ նոսին և զիս զանարժան Սարգիս բանի սպասաւորս աղաչեմ յիշել ի ՏՐ հանդերձ ծնաւղաւք և դուք յիշողդ յիշեալ լինիք։

Նորոգեցաւ ՍԲ Աւետարանս ձեռամբ յոգնամեղ և բազմադիմ խոցիւ խոցեալ Սարգիս անարժան պիտակ անուն սպասաւոր գրոց, որ անուամբս միայն կոչիմ և գործովս հեռացեալ ի կամացն աստուածային, ի թվականիս հաոց Ռ

և ԽԸ (1599) ի հայրապետութեան տեառն Իաւրի, ի յամէնաւրհնեալ դիւղն Բիւրական, որ է յոտն Արագածու ի հարաւու կողմանէ ակնահաեաց ՍԲ էջմիածնա, ընդ հովանեաւ դարմանաշէն և սխրակառոյց կաթուղիկէի ՍԲ Յովանէսի և ՍԲ Սարգսի զաւրավարին և այլ սրբութեանցս, որ ասստ կան ի յառաջնորդութեան ՏՐ Մանուել եպիսկոպոսի, ի խնդրոց քրիստոսասէր և բարէմիտ պարոն Տաւնդարին: Յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց. հաւրն Միրզաջանին, մաւրն Կուլփաշին, եղբարցն Ամիրղուլին (մեկ անվան տեղ բաց է թողնված), քուեերց Կուլչիչակին, վասն յուսո անմահ կենացն և երկնից արքաութեան: Ի հալալ արդեանց իւրոց, յիշատակ բարի և կտակ բարեաց հոգևոր ուրախութիւն և երկնաւոր ժառանգութիւն անդրանիկ որդի և պարծանաց զաւակ քաղցրութեան պտուղ և զաւակ մխիթարութեան: Ըստ Մարգարէին, որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ ի Սիովն և ընդանի յԵրուսաղեմ, վասն որոյ զՍԲ Աւետարանս ետ նորոգել զաւակ ի կեանս և առաջնորդ երկնաւոր պողոտային, որ տանի ի կեանսն յաւիտենից. ուր անմահ կեանքն է և անտրտում ուրախութիւն զոր պատրաստեաց ԱԾ սիրելեաց իւրոց:

Ով սուրբ դասք քահանայից և երամք կրաւնաւորական խրմբից և ընթերցողք ի յեկեղեցիս ՍԲ յորժամ ընթրոնուք զՍԲ Աւետարանս յիշեսցիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զպարոն Դաւտարն և զծնաւղքն զհայրն զՄիրզան և զմայրն զԿուլփաշան, զաւրինաւոր ամուսին իւր զՌոփսիմէն և զորդին իւր զԽաչտուրն և զկենայկիցն զԴայիանէն եւ զամենայն արեան մերձաորքն և զորդին Միրզաեան: Զորս յիշեսցէ ՔՍ ԱԾ յիւր միւս անգամ գալըստենն և արժանի արասցէ երկնից արքաութեան. ամէն:

Հետագայի

247բ. Ես՝ արզուրումիցի Մաթեոս ստացայ զսա հալալ արդեամբ իմով. որ է գինն Ռ (1000) ղուռուշ ի դուռն ՍԲ Աստուածածնայ ձեռամբ տիրացու Կարապետին: (Տրված են վկաների անունները՝ իրենց արհեստներով, անընթեռնելի):

68ա. Վայելումն այս ՍԲ Աւետարանիս ադիմացումիկ (?) ասին և որդոյ ...(3—4 բառ ջնջված) որս տիրացու Մաթէոսին. թվին ՌՄԸ-ին (1759) մայիսին, Լ-ին (30):

4

ԱՎԵՏԱՐԱՆ

(Մաղկաշեն, Ռ. Պետրոսյան)

Յալմալաւայ ՌՃԻԱ—1672

Գրիչ և ծաղկող՝ Հերապետ երեց: Ստացող՝ տեր Ավետիս: Թերթ՝ 340: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 19×14: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 21: Մանրանկարչություն—2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա, 8բ, 9ա, 10բ, 11ա, 12բ, 13ա, 14բ, 15ա (16ա էջի մանրանկարը կտրված-հանված է), 17ա: Մատթեոս՝ 29բ, Մարկոս՝ 118բ, Ղուկաս՝ 176բ, Հովհաննես՝ 266բ: Խորան՝ 20բ, 21ա, 22բ, 23ա, 24բ, 25ա, 26բ, 27ա, 28բ, 29ա, 30ա, 119ա, 177ա, 267ա:

Լուսանցազարդ տերունական, բուսական։ Զարդագիր՝ հանգուցագիր։ Կազմ՝ կաշեպատ տախտակ, արծաթյա կրկնակազմերով (պատրաստվել են 1805 թվականին)։ Վիճակ՝ լավ։

Ավետարանը կոչվում է «Մեռելհարոց»։

Հիշատակարան

Գրչի

26ա. Ձանպիտան գրող և ծաղկող ՍԲ Աւետարանիս զ-էրապետ էրէցս յիշեցէք ի ՔՍ։

333ա—337ա. Փառք... Ուստի և տեսել զսորայս անճառ փրկագործութեան խորհուրդ սրբասէր և հեզահոգի քահանայն տէր Աւիտիսն, որ եռափափաք սիրով, յօժար կամօք և սերտ հաւատով ցանկացող եղեալ այսմ ծաղկաւէտ և վարդափթիթ կենսաբուխ ՍԲ Աւետարանիս, որ և ըստացաւ զսա ի հալալ և ի յարդար վաստակոց իւրոց, յիշելով զբան Մարգարէին որ ասէ. Երանի որ ունիցի զաւակ ի Սիոն և յընդանի յԵրուսաղէմ, որ է եկեղեցի ՍԲ։ Վասն այն յուսոյն ետ գրել զտէրունեան Աւետարանս՝ առատ սրտիւք և զարդարեաց մեծածախ ընչիւք ի պայծառութիւն ՍԲ եկեղեցւոյ և ի վայելումն մանկանց Սիովնի։ Այլ և յիշատակ բաբի հոգւոյ իւրոյ և ծնօղաց իւրոց հօրն Մարգարին, և մօրն (ընդհատված է)։

Արդ, որք ճաշակէք յամէն առատ սեղանոյս և վայելէք յաստուածային բուրաստանէս և հանդիպիք ՍԲ Աւետարանիս՝ կարդալով կամ օրինակելով յիշեսջիք ի ՍԲ և մաքրափայլ յաղօթս ձեր առաջի անարիւն զենմանն ի ժամ սոսկալի ՍԲ պատարագին և լի բերանով ԱՇ ողորմի ասացէք, և բոլոր հաւատով մեղաց թողութիւն հայցեցէք տէր Աւիտիսին և իւր ծնօղացն. ամէն։

Արդ գրեցաւ հոգիաբուխ և աստուածախօս ՍԲ Աւետարանս ի յերկիրն Կորդուաց. որ այժմ կոչի Մահմուդանք, ի գիւղս որ յԱլմալաւայ ասեն ընդ հովանեաւ ՍԲ Յովանիսին և ՍԲ Մարտիրոսին։ Ձեռամբ հոգնամեղ բազմավեր ոգոյն և անարհեստ գրչի Հէրապետի և իմ ծնօղացն տէր Աւետիսին և Հուտմին։

Դարձեալ կրկին անգամ աղաչեմ զսրբութիւնդ ձեր ով լուսերամ դասք քահանայից. յիշեցէք ի ՍԲ և ի մաքրափայլ յաղօթս ձեր զառաջին յիշեցէալսն զտէր Աւիտիսն և զծնօղսն զՄարգարէն և զգ... (ընդհատված է)։

Եւ արդ՝ ես յետինս ի գրչացդ, անկարգս ի կարգաւորացդ, մեղաւորս ի յարդարոցդ, ունայնս և թափուրս ի յամենայն առաքինութեանց և անմասն ի մասնակցութենէ սրբոց, ծոյլս և պղերգս ի յաղօթից և ի փառաբանութեանցն ԱՅ Հէրապետ մեղօք լցեալ գրչիս շնորհիւն տեառն սկսայ և ողորմութեամբ նորին կատարեցի ըզլուսաբուխ և քրիստոսախօս ՍԲ Աւետարանս, ի թուականիս հայկազեան տօմարի յամի հազար և Ճ և քսան և Ա թուոյ (1672)։ Եւ ի դիտապետութեան հայոց հանուրց սեռի տեառն Յակոբի երիցս երանեալ երջանիկ հայրապետի ՍԲ աթոռոյն Էջմիածնի և մերոյ աթոռոյս յառաքելա-

շէն և հռչակաւոր, որ ասի Հոգոց վանից ՍԲ Աստուածածինն, որ է ՍԲ կենդանադիր պատկերն տիրամօրն։ ՔՍ ԱԾն ամենայնի, որ առատն է ի տուրս բարեաց ձեզ յիշողացդ և յիշեցելոցս առհասարակ ողորմեսցի իւր միւս անգամ գալրստեանն, ամէն։ Ընդ սոցին և զիս զանարժան գծողս գՀէրապետ և ըզծնօղսն իմ յիշեցէք բարի կամօք և աղօթիւք ձերովք առաջի ՔՍի և թողութիւն մեղաց հայցեցէք և աղաչեմ զի անմեղադիր լինիք սխալանացն և խոշորութեանն, զի կար մեր այս էր։

Դարձեալ աղաչեմ զի ի կարդալն զաւելորդն բառնայք և զպակասն լնուք և ԱԾ զձեր պակասութեան բարեացն լրնու և զաւելորդ մեղացն բառնայ և առաջնորդեսցէ զձեզ ի ճանապարհն արքայութեան իւրոյ և զձեզ անամօթի պահեսցէ ի յաւուրն աներեկի, որ է մեծ և երևելի աւուրն դատաստանի, ուր բանքրն ամենայն սպառին և գործք մարդկան թագաւորեն և ՔՍի ԱՅ մերոյ փառք յաւիտեանս, ամէն։

Հետագայի

28բ. Յիշատակ է Մեռելճարուց ՍԲ Աւետարանս տէր Օվանիսին իւրեայն ազգի ամենեցուն. ամէն։

337ա—338բ. Յիշատակ է Մեռելյարուց ՍԲ Աւետարանս Մայլայղարցի տէր Օվանիսին։ Դինեաց զՍԲ Աւետարանս, որ ըստացաւ զայս աստուածային ՍԲ մատեան ի հալալ արդեանց և արդար վաստակոց իւրեանց։ ԱԾ ողորմի ասացէք տէր Օվանիսին կողակցուն Նունիին, ծնողացն հօրն Խաչատուրին, մօրն՝ Փարիխան, եղբարք Աբրահամին, Նաւայսարդին, պարոն Վարթին, որդոցն տէր Գրիգորին, հանգուցեալ տէր Կարայպետին, Աստուածայտուրին Ոսկանին, քովորցն՝ Կուլուստանին, Վարթիաթունին, Ճանաղին, Շամամին։ Դարձեալ կրկին աղաչեմ յիշեցէք տէր Օվանէսին, որ ըստացաւ զայս աստուածային բուրաստանս ի հալալ արդեանց և արդար վաստակոց իւրոց յիշատակ իւրեանց աղգի ամենեցուն, և որք հանդիպիք ի սմա կարդալով կամ հարևանցի տեսանելով ԱԾ ողորմի ասացէք իւրեանց ննջեցելոցն, ամէն։

Դարձեալ օվ որք կամենայ այս ՍԲ Աւետարանս ծախել կամ գիրաւել թե աշխարհի կամ կարդացող անեծքն Ուդայի, բատիժն Կայենի առցէ. ամէն, ամէն։ Թվին ՌՃԼ (1681)։

5

ԱՎԵՏԱՐԱՆ

(Արագած, Վ. Հունանյան)

Ապարանից սուրբ Խաչ (Մոկք) ՌՃԽ—1691

Գրիչ՝ Նահապետ քահանա*։ Ստացող՝ Մարգիս, Մարգրիտ։ Թերթ՝ 313։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝ 18×13։ Գրություն՝ երկսյուն։ Գիր՝ բոլորգիր։

* Նահապետը նույն 1691 թ. ևս մեկ Ավետարան է արտագրել Մխիթարի պատվերով։ Այն այժմ գտնվում է Մատենադարանում (տե՛ս Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հատ. Բ, կազմեցին Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1970, էջ 755, № 8485)։

Տող՝ 21։ Մանրանկարչություն—Մատթեոս՝ 3բ, Մարկոս՝ 88բ, Ղուկաս՝ 139բ, Հովհաննես՝ 240բ։ Կիսախորան՝ 4ա, 89ա, 140ա, 241ա։ Լուսանցազարդ՝ տերունական, բուսական։ Զարդագիր՝ հանգուցագիր։ Պահպանակ՝ չունի։ Կազմ՝ կաշեպատ տախտակ, Ա փեղկի վրա ամրացված է արծաթյա կրկնակազմ՝ ականակուռ խաչով։ Վիճակ՝ լավ։

Վ. Հունանյանի նախնիները Ապարան են գաղթել Մուշից 1830-ական թվականների սկզբին։

Հիշատակարան

Գրչի

309բ. Փառք... Որ ետ կարողութիւն իմոյ տրկար և փծուն գծողի ՍԲ Աւետարանիս որ Նահապետ անուն քահանայիս. միայն թէ զանունս ունիմ և զգործս ոչ, գրեցաւ և աւարտեցաւ սա ի գիւղաքաղաքն որ կոչի Ապարանց ընդ հովանեաւ ՍԲ խաչին և է մասանցն ՔԻ, որ անդ սպասու ՍԲ խաչինկան հաւաքել։ Եւ ՍԲ Աստուածածնին և ՍԲ Յովհաննու Մկրտչին և սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. ի թվականիս հայոց ՌԺԽ (1691)։

Արդ աղաչեմք զձեզ ով քահանայք և մանկունք ՍԲ եկեղեցոյ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զիս՝ զՆահապետս և զուսուցանօղս իմ և ծնողաց իմոց հօրն՝ Խաչատուրին և մօրն՝ Գոլբստանին, և իմ եղբարցն՝ Գրիգորին և Մուրատին, և հանգուցեալ Ղարիպշանին, և իմ կողակցոյն՝ Գաւգալին, և իմ դեռաբողբոջ որդոյն՝ Երեմիային. ամէն։ ՏՐ ԱԾ զոր տեսեալ բարէմիտ և աստուածասէր։

(Այլ ձեռագրով) Արդ աղաչեմք զձեզ ով լուսափայլ դասք վարդապետաց և քահանայից և ժողովուրդք հաւատացեալք զողորմին ասացէք այս անուն արիական քաջ Սարգսին և իւր կողակցոյն Մարգրտին և իւր ծնողացն՝ Յակոբին և Գոլաղին և իւր եղբօրն՝ Դրիգորին և իւր կողակցոյն՝ Եղիսային և իւրեանց որդոյն՝ Ղազարին, մանաւանդ իւր հօգէպահ Գալոյին։ Դարձեալ այս անուն Սարգսին և իւր կողակիցն Մարգրտին։ Յիշեցին զիւրեանց հոգիսն. զի նոքա որդիք չունէին այլ աստուածային սէրն վառվաւ ի սիրտս նոցա և նոքա սէրտ սիրով գնեցին ՍԲ Աւետարանս ի յապարանցի տէր Նահապետից ի ԺԵ (15) ղուռոշ և արարին իւրեանց հոգոյն որդի և յիշատակ, և ոՀՖ լաւ և ընտիր, և արարին զՆեքոյի տէր Յակոբ քահանայն զվերակացու և սպասաւոր ՍԲ Նորընծա Աւետարանին. խնդրեմք ի յապինաղ ՍԲ յարարչին, որ այս Սարգիս խնդրածով առաւ զՍԲ Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց և արար յիշատակ հոգւոյ իւրոց թողու ՏՐ ԱԾ զդործեցեալ մեղք Սարգսին և իւր կողակցոյն՝ Մարգրտին և իւր տան հին և նոր ննջեցելոցն. ամէն։ ՏՐ ԱԾ եղիցի, եղիցի։

Հետագայի

ա. Յիշեցեք ի ՔՍ և ԱԾ, ողորմի ասացէք վերջին ըստացող ՍԲ Աւետարանիս զԱմիրն և հայրն իւր զՎարդան, զմարն զՀոիփսիմէն, զեղբարն՝ Ղա-

զարն, զորդիքն՝ զՊողոսն, Աւետիսն, զԱսպատուրն, զՅովանէսն, զպարոն Վարդն և զկողակիցք զՄարիամն, և զԱղուրն և զդուստր՝ զնուբարն և զԳոզալն, զՎարդերն, զՈսկին, զթոռնիկն՝ զՍաֆարն, և զԱրմաղանն: Յիշեցէք ի ՔՍ և ԱՏ. ողորմի ասացէք, ամէն. որ ըստացաւ զՍԲ Աւետարանս ի հալալ վաստակոց իւրոց Ճ (100) դուռոշ և եդ յիշատակ ի ձեռն Յովանէսին. օվ որ ծահե կամ գրաւէ, այնպիսին հանեալ և որոշեալ լինի ի շնորհացն որդոյն ԱՅ և զանէծք Կայենին և զխաչհանողացն առցէ. ամէն եղիցի:

բ. Յիշատակ է ՍԲ Աւետարանս Շանին որդի Տանոին եղբայր Մուրատին, մօր սորայ Նարկիզին, Զուրմանին, Թանաշին. հալալ վաստակոց էառ ետ ի ձեռն Յովաննես վարդայպետին, որ յիշատակ է աւտենից. ասացէք ԱՏ ողորմի, ԱՏ ձեզ ողորմի. ամէն: Թվին ՌՄԼԸ (1789) դեկտեմբերի ԻԵ-ին (25):

գ. ...ես՝ տէր Մարտիրոսի թոռ Հովանէս առի կարգ քահանայութէան Մշո ՍԲ Կարայպետ և եկի թվին ՌՄՀԹ (1829):

6

ԱՎԵՏԱՐԱՆ

(Սարալանջ, Վ. Սարդսյան)

ԺԷ—XVII

Գրիչ՝ Կարապետ երեց: Ծաղկող՝ Սահակ Վանեցի: Թերթ՝ 331: Նյութ՝ թուղթ: Մեծություն՝ 12×16,8: Գրություն՝ երկսյուն: Գիր՝ բոլորգիր: Տող՝ 19: Մանրանկարչություն—2բ, 3ա, 4բ, 5ա, 6բ, 7ա: Խորան՝ 7բ, 8ա, 9բ, 10ա, 10բ, 11ա, 11բ, 12ա, 12բ, 13ա: Մատթեոս՝ 15բ, Մարկոս՝ 103բ, Ղուկաս՝ 162բ. Հովհաննես՝ 260բ: Կիսախորան՝ 16ա, 104ա, 163ա, 261ա: Լուսանցազարդ՝ տերունական, բուսական: Զարդագիր՝ հանգուցագիր: Պահպանակ՝ մեկական երկաթագիր թերթ: Կազմ՝ կաշեպատ տախտակ: Վիճակ՝ լավ:

Ավետարանը կոչվում է «Ոսկեկող»:

Հիշատակարան

Գրչի

161բ. Յետինս ի գրչաց և զառաջինս ի մեղաւորաց, զծոյլս ի բարեաց և զփարթամս ի չարեաց սուտանուն Կարապետ էրէցս աղաչեմ զձեզ յիշեցէք յերկնաբացիկ յաղաւթս ձեր և ԱՏ յիշողացդ ողորմեսցի, ամէն:

Ծաղկողի

5ա. Զտառապեալ սուտանուն վանեցի Սահակ ծաղկողս* յիշեայ և ԱՏ զձեզ յիշէ, ամէն:

162բ. ԱՏ լուսաւորէ զնդիսամամու հոգին, որ ըորշտայ ապուրով կերակրեց զմեղաւոր քարտողարս ի Բաբելոն:

* Հավանաբար «Ոսկեկող» Ավետարանի ծաղկողը մեր մատենագիտությանը հայտնի Սահակ Վանեցի ծաղկողն է, որն ստեղծագործել է 1662—1675 թթ. Վանում, Բաղեշում, Մուշում:



Զաքարիա քահանայի ինքնագիրը
(1488 թ., Արճեշ)



1685 թ. Վենետիկի ավետարանի
201-րդ էջի հիշատակարանագրությունը

1765 թ. կնիքը և նրա դրոշմը

7

ԱՂՈԹԱԳԻՐՔ

(Ապարան, Գ. Քոչարյան)

Ալիծոր ՌՃԼԹ—1690

Ստացող՝ Մարիան։ Թերթ՝ 95։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝ 8×11։ Գրություն՝ միասյուն։ Գիր՝ բոլորգիր։ Տող՝ 14։ Պահպանակ՝ Ա փեղկի տակ թղթյա երկու թերթ։ Կազմ՝ կաշեպատ տախտակ։ Վիճակ՝ բավարար։

Հիշատակարան

Գրչի

95ա—95բ. Փառք... Գրեցաւ քաղցրաձաշակ ՍԲ աղօթքս, որ է խօսք Եփրեմի ընդ ԱՅ ի յանապատն յԱլիծորու ի դռոնն ՍԲ Աստուածածնին, ձեռամբ (անունը քերված է) ապաշխարողի, վայելումն քոյր Մարիանին, յիշատակ իւրն և ծնողացն, ամէն։

Զեռքս փրտի և հողանա,
Մոխիր, փոշի, գավախ դառնա,
Դիրս յիշատակ առ ձեզ մնա
Յիշէք առ ՏՐ զգծող սորա։

Աւարտեցաւ թվին ՌՃԼԹ (1660)։ Աղաչեմ զձեզ, ով ՍԲ յաղօթողք, յիշէք զմեզ յաղօթս ձեր յորդոր և դուք յիշեալ լիցիք առաջի ՔԻ. ամէն։

8

ԿԻՊՐԻԱՆՈՍ

(Ապարան, Հ. Գյուրջյան)

Արճեշ ՉԼԷ—1488

Գրիչ՝ Զաքարիա քահանա։ Ստացող՝ Ղարագաւզ, Մուքայիլ և ուրիշ.։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝ 507×8։ Գրություն՝ միասյուն։ Գիր բոլորգիր։ Տող՝ 668 (ժապավենի ամբողջ երկարությամբ տողերի երկու եզրերով իջնում են կապույտ թանաքով գրված մեկական տողեր)։ Մանրանկարչություն—միջին որակի նկարներ՝ Մարիամ Աստվածածնի և Քրիստոսի, Գրիգոր Նարեկացու, սրբերի, առաքյալների։ Վիճակ՝ բավարար, գրչի հիշատակարանն է վնասված։

Հիշատակարան

Գրչի

654—668 տող. Գրեցաւ Կիպրիանոսս ձեռամբ անարժան ծառայիս ԱՅ Զաքարա սուտանուն քահանայի ի թվին ՉԼԷ (1488) ի քաղաքս Արճէշ, ի սա-

յելումն Ղարագուզին և Մուխայիլին և հարսն Է.ռա.ն. Ջանփաշային և [Ս]ալ-
չուկին, և զաւակացն Յովանիսին և Յոհանին, Սահակին, և Մեսրովպին, Գրի-
գորին, Կարապետին, Շահմուրատին, ...(2—3 բառ ջնջված) և քուերցն...
(3—4 բառ ջնջված), ալամին, Նու... (1—2 բառ ջնջված) և ամեն ար(եան
մերձաւորաց)։

Ստացողի

236—247. Բարեխաւսութեամբ ՍԲ վարդապետին փրկեա յամեն փոր-
ձանաց զՍտեփաննոսն, զՂուբաթն և զՄիրաքն, և զՍառէն, և զՍալչուկն։ (Այլ
ձեռագրով) Եւ զՄելքիսէթ աբեղէն և զՀերապետ մանուկն և զԳուլաղէն յամեն
փորձանաց ՏՐ ՅՍ ՔՍ. ամէն։

300—305. Շնորհեա ծառայիս այս Ղարգօզիս և Միքայելիս և Յովանսիս
և Սահակին և Մեսրովպին և ամէնին։

440—444. Գրեցաւ այս յիշատակ Ղարագօզին և Միքայելին և ծնողացն
Կարապետին և Մարմելիքին, ԱՇ ողորմի. ամէն։

466—468. Ի Գրիգորն, ի Մուրատն և ի Ստեփաննոսն, և ի Սառէն. ամէն։

Հետագայի

(Թիկունքին) Յիշատակ է այս ճառս (հաջորդ 13 տողերը ամբողջովին
ջնջված են) գրեցաւ գիրս փետրուարի ԻԶ-ին (26) մեծ պահոց օր, երկուշաբթի.
ՏՐ Պետրոսի ձեռամբ անարժան և անպիտան քահանային. ձեռամբ ի վեկաբ (?).
ամէն։ Թվին ՌՄՁԵ-ին (1836)։

9

ԿԻՊՐԻԱՆՈՍ

(Արագած, Ռ. Խուրշուդյան)

ՌՃՄԲ—1703

Դրիչ՝ Եզեկիել դպիր։ Ստացող՝ Շուշան։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝
383×8։ Գրություն՝ միասյուն։ Գիր՝ նոտրգիր։ Մանրանկարչություն—հասա-
րակ նկարներ՝ Մարիամ Աստվածածին, Հիսուս, Գրիգոր Լուսավորիչ, տերու-
նական և այլ սրբեր։ Վիճակ՝ վատ, ձեռագիրը կտրտված է, որոշ հատված-
ներ պակասում են։

Ռ. Խուրշուդյանի նախնիները 1830-ական թթ. սկզբներին Ապարան են
եկել Սասունից։

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Գրչի

Վերջում, 6 տող.* Գրեցաւ Կիպրիանոսս ձեռամբ սուտանուն Եզեկիել
դպրի ի թվին հայոց ՌՃՄԲ (1703) մայիս ամսոյ Բ-ին (2), ի վայելումն (այլ

* Պակասավոր ձեռագրերի հիշատակարանների տեղը և տողերի քանակը կնշվի։

ձեռագրով) Շուշան. ամէն։ (Շուշան անվան տակ նույն ձեռագրով ավելացված է նաև Սուլթան անունը)։

Հետագայի

(Նույնի տակ այլ ձեռագրով) Յիշատակ Սահակին, իւր մայր Նազէին մին համաիլ։

10

ՀԱՄԱՅԻԼ

(Սարալանջ, Ա. Նահապետյան)

ՋԵ—1456

Գրիչ՝ Առաքել սարկավագ։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝ 186×7,3։ Գրություն՝ միասյուն։ Գիր՝ նոտրգիր։ Վիճակ՝ վատ, ձեռագիրը կտրտված է, պակասավոր, խոնավությունից թրջված։

Հիշատակարան

Գրչի

Վերջում, 5 տող. Գրեցա համայիլս ձեռամբ Առաքելիս մեղաոր սարգաւաքիս և թվականիս հայոց ՋԵ (1456). ասէք զհայր մեղ ամէն, տէրն ողորմի ձեզ։

11

ՀԱՄԱՅԻԼ

(Ծաղկաշեն, Ռ. Ղուկասյան)

Կոստանդնուպոլիս ՌՃԺԹ—1670

Գրիչ՝ Հայր Մեղայիս։ Ստացող՝ Գրիգոր։ Նյութ՝ թուղթ։ Մեծություն՝ 388×7։ Գրություն՝ միասյուն։ Գիր՝ նոտրգիր։ Մանրանկարչություն—հասարակ նկարներ՝ տերունական, սրբերի։ Վիճակ՝ վատ, ձեռագիրը կտրտված է, պակասավոր։

Հիշատակարան

Գրչի

Վերջում, 19 տող. Արդ գրեցաւ համայիլս ի լաւ և ընտիր օրինակէ, ի թագաւորանիստ քաղաքն Կոստանդնուպոլիս, թվին հայոց մեծաց ՌՃԺԹ (1670), ի վայելումն աստուածասէր և բարեմիտ Ադամի որդի Գրիգորին, զոր ՏՐ ԱԾ բարով վայելել տացէ յէրկար ժամանակաւ. ամէն։

Արդ որ հանդիպիք սմայ կարդալով կամ յօրինակելով, յիշեսջիք ի մաքրայփայլ աղօթս ձեր զստացող սորա և զմեղապարտ գրիչս միով Հայր Մեղայիս. և որ յիշէ յիշեալ լիցի ի տէառնէ. ամէն։ Հայր մեր որ երկինս ՍԲ եղիցի։

Հետագայի

(Նույնի տակ) Յիշատակ Գիրիքորի *և իր ծնողացն* Սալպին, Մարդարին, *ամէն։*

12

ՀԱՄԱՅԻԼ

(Ապարան, Վ. Պետրոսյանց)

ՌՃՀԱ—1722

Նյութ՝ *թուղթ։* Մեծություն՝ *192×7,2։* Դրություն՝ *միասյուն։* Գիր՝ *բոլորգիր։* Մանրանկարչություն—*հասարակ նկարներ։* Վիճակ՝ *լավ, պակասում է սկիզբը։*

Հիշատակարան

Գրչի

Վերջում, 14 տող. Փառաւորեալ ՏՐ *ընկալ զաղաչանս ծառայիս* ԱՅ *և կատարեայ ի բարի զինդրվածս իմ բարեխօսութեամբ սրբոյ ու Աստուածածնին և Հովանն ու Կարապետին և սրբոյն Ստեփանոսին Նախայվկային և ամենայն սրբքոց.* ՏՐ ՅՍ ՔՍ ԱԾ *եղիցիս պայապան ծառայիս* ԱՅ։ *Գրեցաւ համայիլս ի թվականիս ՌՃՀԱ (1722). ամէն։ Հայրս։*

13

ՀԱՄԱՅԻԼ

(Վարդենիս, Մ. Վարդանյան)

(1787 թ. առաջ)

Ստացող՝ *Յովանէս։* Թերթ՝ *105։* Նյութ՝ *թուղթ։* Մեծություն՝ *8×5,5։* Դրություն՝ *միասյուն։* Գիր՝ *բոլորգիր, նոտրգիր։* Տող՝ *11։* Մանրանկարչություն—*միջին որակի նկարներ, ծաղկանկարներ։* Կազմ՝ *տախտակ։* Վիճակ՝ *վատ, խոնավությունից էջերը գունաթափվել են, գույները՝ խամրել, խախտվել է էջերի հերթականությունը։*

Հիշատակարան

Ստացողի

17ա. ... Ծառայիս Յովանէսին, *կնոջն՝* Շարիբստանին, *որդոցն* Ալայվէրդուն, Մանգայսարին, *ամէն։ (Այս նախադասությունը կրկնվում է յուրաքանչյուր աղոթքի վերջում)։*

Հետագայի

ա. 3բ. Այս համայիլս Խորոյի *որդի* Թումասին *է։* ԱԾ *վայելումն տացէ. ամէն։ Թվին ՌԲՃԼԶ (1787), օգոստոսի ամսուն։*

բ. 3ա. Այս է... (2 բառ ջնջված) ուսթայ Երանոսն սպանաւ. ԱԾ արքայութիւն տացէ. էր թվին ՌՄԽԶ-ին (1797);

դ. (Նույնի տակ) Այս է թւական Մխէին, որ ի մօրէն եղաւ. թվին ՌՄԾԷ-ին (1808), որ ամի նորէն բռնէցին;

դ. 2ա. Այս է... (2 բառ ջնջված) նորաբողբոջ վարդ փշտիալ Մելքոնի. թվին ՌՄԾԳ-ին (1804), այն Մ տարին բաժանեցան խորօն Ղազար:

14

ՀԱՄԱՅԻԼ

(Ապարան, 3. Փանոսյան)

1852

Գրիչ՝ 3ակոբ Միրիջանիան; Ստացող՝ Փանոս; Նյութ՝ թուղթ; Մեծություն՝ 328×7; Գրություն՝ միասյուն; Գիր՝ բոլորգիր; Մանրանկարչություն—հասարակ նկարներ; Վիճակ՝ վատ, ձեռագիրը կտրտված է, պակասավոր;

Հիշատակարան

Գրչի

Վերջում, 3 տող. 1852 ամի դեկտեմպերի... (2 բառ ջնջված) ի 3ակոբ Միրիջանիան:

15

ՀԱՄԱՅԻԼ

(Արագած, Վ. Հունանյան)

1856

Գրիչ՝ 3ակոբ Միրիջանիան; Նյութ՝ թուղթ; Մեծություն՝ 319×8; Գրություն՝ միասյուն; Գիր՝ բոլորգիր; Մանրանկարչություն—հասարակ նկարներ; Վիճակ՝ վատ, ձեռագիրը կտրտված է, պակասավոր;

Հիշատակարան

Գրչի

Վերջում, 4 տող. Արդ գրեցաւ վանեցի տիրացու 3ակոբ Միրիջանիան. 1856 ամի յունվարի 30;

ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐ

16

ՈՒՐԲԱԹԱԳԻՐՔ

Տպագրված 1512 թ. Վենետիկում, Հակոբ Մեղապարտի կողմից
(Արագի, «Զարչոյ ավետարան» սորատեղի)

Գիրքը բավարար վիճակում է; Գրքի էջերը սկզբից համարակալված են մինչև Ճ (100), ապա 4 էջ (8 երես) բաց է թողնված և կրկին համարակալված է Ա-ից մինչև Լ (30); Գրքի սկզբից պակասում է 2 թերթ (4 երես);

Առաջին համարակալում, ԻԹ էջ. Խաքուն, Մելիք, Վարդան:
ԽԲ էջ. Թվին ՌՄԽԲ (1793)։
Երկրորդ համարակալում, Ժ էջ. Մուրատին, թվիս ՌՄԼԵ (1786)։ Տիրացու Ղազարին հարսին թվին ՌՄԼԷ (1788)։

17

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ

Տպագրված 1666 թ. Ամստերդամում

(Ապարան, Ս. Հակոբյան)

Գիրքը լավ վիճակում է։ Վերջին էջը, որտեղ գրված է Հոհանի հիշատակագրությունը, ներքևից մաշված, կտրտված է, որի պատճառով հիշատակագրության վերջին տողերի սկիզբն ու վերջը անվերականգնելի են։

էջ 834. Յիսուսի Քրիստոսի ծառայ Հոհան վարդապետ և սպասաւոր մեծի աթոռոյ սրբոյն էջմիածնի, որ հրամանաւ տեառն Հակոբայ սրբազան կաթողիկոսի տուայ զԱԾաշունչ գրեանսն վաճառելոյ էկի աւրհնեալ գնողն... (2 բառ ջնջված) Ածաշունչս Մկրտիչ, Ասատուր, Տօլղուրգար, Սարգիս հանգուցեալ առ անվանիկ եղբարք։ Ստացան զԱԾաշունչս զայս յիշատակ հավիտեանց ծնողաց և զաւակաց իւրեանց, տէր ԱԾ բարով վայելել տայցէ... (4 բառ ջնջված) ՍԲ... (3—4 բառ ջնջված) միշտ և հանապազ, իւրեանց տան և տեղին լինի, ԱԾ... (4—5 բառ ջնջված) զնա մինչև... (4 բառ ջնջված) և անթառամ պսակացն արժանաւորս արասցէ հանդերձ ննջեցելով... (2 բառ ջնջված) յաւիտեանս. ամէն։ Հայր մեր որ յերկինս ես։ Դրեցաւ իմով ձեռամբ թվին ՌՃԻԸ (1679)։

Ա փեղկի տակ, պահպանակի վրա. 1765 ամի ի 25 մարտի տէր Ղազարէ ... (3 բառ ջնջված) Երեւանցի տէր Սիմօնի որտի սովտակար Այվազն 34 ամայ է, կինը՝ Թագուհին 28 ամաց, որտին՝ Դէորգ 3 ամաց, դուստրն՝ Հռիփսիմա։ է 12 ամաց։

— 1786 ամի ի 10 փետրվարի Երեւանցի Այվազի որթին Դէորգին պսակեցի ԱԾային հրամանովը։

— 1788 ի 20 նոյեմբերի Էյվազի որտի Դէորգին եղաւ դուստր, անունն է Շուշան:

Օրինակեալ ի մատենէ կոնսիստորէ հայոց Աստրաիանաւ: (Մյուս հիշատակագրությունները անընթեռնելի են)։

18

ԱՎԵՏԱՐԱՆ

Տպագրված 1680 թ. Վենետիկում, Միքայէլ Պառպօնի տպարանում

(Ապարան, Մ. Պողոսյան)

Գիրքը բավարար վիճակում է։ Ա փեղկի վրա ամրացված է դրվագված արծաթե կազմ։

էջ 1—2. Պատճառ գրոյս այս է. այս ՍԲ Աւետարանս յիշատակ է Պետրոսին, տէր Յակոբին, Պողոսին, Էրանոսին, Խաչատուրին և իւր որդոցն՝ Պետրոսին, Սանոսին, Դազպարին, Յովաննէսին, Ղիմաթին, Սոլբանին: Դարձեալ յիշեցէք և ԱՍ ողորմի ասացէք և մասնակից խաչհանողաց լինի. ամէն։

Պետրոսին, տէր Յակոբին, Պողոսին, Էրանոսին, Խաչատուրին և իւր որդոցն՝ Պետրոսին, Սանոսին, Դազպարին, Յովաննէսին, Ղիմաթին, Սոլբանին, որ առանք այս ՍԲ Աւետարանս ետանք ի ձեռն տէր Եղիային: Անչինչ յիշատակ հոգոյ մերոց. որ ջանայ կամ գրաւ կամ այլեւայլ առնէ զբանս դայս զանէծքն Կայինին առցէ, զպատանն Յոդային։

Գրեցաւ ի յիշատակարանս ձեռամբ Թումայս նախաշին։ Մի բերանով յիշեցէք ամի։

19

ԱՎԵՏԱՐԱՆ

Տպագրված 1685 թ. Վենետիկում, Ափփրելլո Բարգօնի տպարանում (Ապարան, Մ. Պողոսյան)

Գիրքը բավարար վիճակում է։

էջ 121. Ի ծագման ճշմարիտ արեգակն և ի յատնիլ ԱՄաբան նորագուարճ բերկրանօք պայծառացան արարածք գերազարեալ փարթամութեամբ, անպարագիտ, բնութեամբ զարդեաւ նախահայրն ի շատ սերմած, նիհրմանէն և խաչակառկառ բեւեռապինտ բաղկօք ազատեցուց ի խաւարային, մեղաւէր բանդէն և այրդ այսքանօք իմաստութեամբ լցաւ այս Առագելի կին էլբոհասին և ցանկացող եղեւ այս լոյսափայլ ՍԲ Աւետարանիս յիշատակ Առագելի հոգոյն և իւր որդոցն արեւուն անչինչ յիշատակ և որ հանդիպիք սմա ԱՄ ողորմի ասացէք Առագելին և իւր կողակցուն էլբուհասուն և իւր որդոցն՝ Սարկիսին և Մարգարին, Մէհէրին, Ապանին և հօրն՝ Սարգիսին և հօրն-եղբօրն՝ Թաղանին և որդոյն էլէֆսանին. ամէն։

Դարձեալ ԱՄ ողորմի ասացէք Առագելի հոգոյն, որ ԱՄանեղ ողորմի. ամէն։

էջ 201. Ես՝ նուաստ հոգի տէր Մարգարէս սատացայ զՍԲ Աւետարանս զայս ի հալալ արդեանց և յարդար վաստակոց իմոց, յիշատակ հոգոյ իմոյ և ծնողացն իմոց Վարդան և Խանպէկուն, ամուսնոյն իւրոյ Աղրիկան, որդւոյն Մաթէոսին և դստէրացն Հռիփսիմին և Մարիամին: Եղբօրն Դաւթին կողակցոյն Թուրվանտին, որդւոյն Թիլաթին և Իսրայելին: Եւ հանգուցեալ եղբօրն՝ Զաուխին, կենակցին՝ Շահումին, որդւոցն՝ Շահմուրատին, Ղուլաթին, Ղազարին և ամենայն ազգականաց նոցին՝ կենդանէացն և ննջեցելոցն ի միասին, որք հանդիպիք սմա տեսանէլով և կամ վայելելով յիշեցէք և ԱՄ ողորմի ասացէք վերոյդրեալ տէր Մարգարին և իրայնոցն, ամենեցուն. ոյք յիշէք և զողորմին տայք ի ՔԷ ԱՅ յիշեալ լիջիք և ողորմութեան նորին արժանի լինիցիք. ամէն։ Հայր մեր որ յերկինս ես ՍԲ եղիցի անուն քո։

20

ԱՎԵՏԱՐԱՆ

Տպագրված 1685 թ. Վենետիկում, Ափփրելլո Բարդոնի տպարանում

(Ապարան, Ռ. Քոչարյան)

Գիրքը թերթահան է եղած, որոշ թերթեր քրքրված են։

էջ 415. Յիշատակ է ՍԲ Ավետարանս հանգուցեալ լուսայհոգի տէր Աղեկսանդրի և իւր կողակից Համանիզելաց, յիշատակ և իբր դուստր որթի Ալմասատ, որ յանցնեցի և իմ հօրքուրի որդի նորընծայ տէր Յոհանէսին։ ԱՄ վաելումն տացէ յիշատակն արթարոց հօրնութեամբ. եղիցի, եղիցի, ամէն։

Գրվեցավ գիրս թվին հայոց ՌՄԿԵ-ին (1816) ամսոյ օգոստոսի ԺԵ-ին (15)։ Որ ի մեղայպարտ անարժանս... (2—3 բառ չնջված) օծվեցայ. ամէն։

էջ 414. Ի վայելումն նորընծայ տէր Յովանէսին թվին հայոց ՌՄԿԵ-ին (1816)։

21

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ

Տպագրված 1710 թ. Վենետիկում, Անտոնիոս Պոռթոլի տպարանում

(Ապարան, Ս. Հակոբյան)

Գիրքը լավ վիճակում է։ Հիշատակագրությունը գրված է «Առ ընդերձողսն» ուղերձի տակ։ Հիշատակագրության կենտրոնում գրված է Հակոբ Շամախեցու (ամենայն հայոց կաթողիկոս 1759—1763 թթ.) կնիքը, որի վրա կարդացվում է. «ՔԻ ծառա Յակոբ վարդապետ։ ՌՃՁԴ (1735)»։ Հ. Շամախեցու՝ 1735 թվականը կրող կնիքը դաջված է նաև նրա գրած և այժմ Մատենադարանում գտնվող Դավաղանագրքի էջերին (տե՛ս Յուցակ, հ. Բ, էջ 529)։

էջ 6. Զյիշէա տէր ողորմութեամբ քոյ զՅակոբ բազմամեղ վարդապետն Շամախեցի զստացօղն սորին, յաւուր մեծի գալստեան արքայութեան քոյ։ (Նույնը կրկնվում է նաև 177 և 384 էջերում)։

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԻՐԵՐ

22

ԱՐԾԱԹԵ ԽԱՉ

(Ապարան, Վ. Պետրոսյանց)

Գտնվել է Ապարան ավանում։

Թիկունքին, 7 տող. Յիշատակ է ՍԲ խաչս մահդսի Խալիֆին եւ իւր կողակցուն, ի դուռն Խաշլուայ։ ՍԲ Գէորգայ։

23

ԱՐՑԱԹԵ ԽԱՉ

(Ապարան, Գ. Քոչարյան)

Թիկունքին, 2 տող. Յիշատակ է ՍԲ խաչս Մանուկ Վարդանովի կողակիցուն՝ Մարիամ Թումաեովի. Պաշ Ապարան գողի ՍԲ եկեղեցի. 1847։

24

ԱՐՑԱԹԵ ՍԿԻՀ

(Մելիքգյուղ, Մ. Կարապետյան)

Սկիհը բերվել է Վանից։

Շրջանաձև, ուռուցիկ տառերով, 2 տող. Յիշատակ է ՍԲ սկիհս Մարգրիտին կողակցուն տէր Ահարոնին, ի ձեռն տէր Անտոնին։ ՌՃՁՁ (1737) ի դուռն ՍԲ ԱՇԱՇԻՆ։

Նույնի տակ, փորագրված, 1 տող. Յիշատակ է Դասպարին, թվին ՌՄԿ-ին (1811), որ ըստացաւ (ընդհատված է)։

25

ԿՆԻՔ

(Ապարան, Մ. Պողոսյան)

Կնիքը գտնվել է Ապարանում։ Կնիքի տրամագիծը 8,5 սմ է։ Շրջանագծի ներսում 6,4 սմ տրամագծով ավելի փոքր շրջան է գծված, որի մեջ փորագրված է խաչված Քրիստոսը։ Քրիստոսի ոտքերի մոտից դեպի վեր բարձրացած ու դեպի Քրիստոսը խոնարհված երկու ծաղիկ է փորագրված։ Փոքր և մեծ շրջանակների միջև գտնվում են 25 թագաձև փոսիկներ։

Կնիքի վրա, Քրիստոսի գլխավերևում. Յիսուս Քրիստոս թագաւոր հրէից։ Քրիստոսի մարմնի երկու կողմերում. Յիսուս Քրիստոս։

Կնիքի վրա դրսից, շրջանաձև, 1 տող. Ի բարի վայելումն տացէ տէր Օվակեմին. թվին ՌՄԺԴ (1765)։

РУКОПИСИ, СТАРОПЕЧАТНЫЕ КНИГИ И ДРУГИЕ АРХЕОГРАФИЧЕСКИЕ МАТЕРИАЛЫ АПАРАНСКОГО РАЙОНА

В. М. ПЕТРОСЯНЦ

(Резюме)

В статье описано 15 рукописей XIII—XIX вв., из них шесть Евангелий, один молитвенник, остальные—амулеты (համայիլ). Впервые публикуются все содержащиеся в них памятные записи и пометки, а также многочисленные пометки в старопечатных книгах, надписи, вырезанные на серебряных крестах и потире, и надпись одной печати. Описанные рукописи и предметы принадлежат лицам, живущим в Апаранском районе Армянской ССР.